

Մարդաստան գաւառիս եպիսկոպոս ձեռնադրել տա. գաւառը նորա ձեռաց գնաց, եպիսկոպոսութիւնն էլ իմ ձեռացս թռաւ:

— Այս բաժակը կը քամեմ մինչեւ վերջին կաթիլը եպիսկոպոսութեան դառնալուդ վրայ:— Եւ Վահրիճ լցուց ու քամեց: Յայր սուրբը շուտ մը նորա օրինակին հետեւեցաւ առիթն ամենեւին չի կորսնցնելով: Վահրիճ հետաքրքրութիւն ունեցաւ այս առանց միաբանի վանահօր ամէն գաղտնիքն իմանալու, վասնզի տեսաւ, որ շարունակ այդ Արծրունեաց հետ դործ ունեցել էր, վասնզի ինքզինքը Գուրգենէ չէր կարող բաժնել, եւ իր տիրոջ հետ բարեկամ կամ թշնամի կը դառնար անդադար, եւ հիմա Յաղամակերտի դռան առաջ Երագանի գիւղին քով գտնելով Դերենիկի բարեկամ մը՝ իր կէս գինեհարեալ վիճակին մէջ օգուտ քաղել մտածեց, ուստի մէկ մը գինին գովելով՝ մէկ մը հայր սուրբին եպիսկոպոսութիւնը առաջ քշելով կուժին տակը հասաւ սեղանակցին հետ եւ տեսաւ, որ մտերմութեան դուռ բացուեցաւ:

— Քեզի պէս արթուն վարդապետ մը դժբախտութիւն է, որ այսպիսի անապատի մը վանահայր մնա. բայց իշխանները երախտամոռաց եակներ են, դու հօրը ծառայէր ես, որդուոյն ծառայէր ես՝ կուժ մը գինուով ինչպէ՞ս կարելի է գթեզ վարձատրել եւ դադրիլ. իրաւ ես չեմ գիտեր ինչ տեսակ ծառայութիւն ըրած ես սոցայ, բայց վերջապէս իշխան մը այսպիսի ծանր եւ դժուար ժամանակի մէջ՝ քեզի պէս արթուն մարդու պէտք էր, որ աս պատուական ըմպելիքէն ուրիշ վարձատրութիւն մ'ըներ:

— Իմ ըրած ծառայութիւնս Դերենիկին սովորական բան չէր... հիմա թող մնա...

Իսկ Վահրիճ թէպէտ լաւ դիտեր թէ կուժը իր վերջին կարողութիւնը թափել էր, բայց կամաւ ուժով մը վեր առաւ ամանը, որ իւր պարագութեան համար վարդապետին գլխէն աւելի բարձրացաւ. հայր սուրբը հիւրընկալութեան պարտաւորութիւնն կատարեալ ընելով ձայնեց ծառային եւ հրամայեց ուրիշ լեցուն աման մը բերել: Արդէն վարդապետին լեզուն ծանրացեր էր, եւ իշխանաց ապերախտութեան յիշատակն էլ գլխուն վրայ նոյնպէս ծանրանալով՝